

ազգաբնակութեամբ, իսկ հայերի թիւը 60—70 հազարից իջել է 17—18 հազարի. անհամեմատ չարիքը, որ սպառնում է հայութիւնը ոչնչացնել հայերի երկրում... Հեղինակը դառնացած սրտով աւելացնում է վերոյիշեալ տողերին. «Հայ ազգաբնակութեան թուի այդ խոշորկէկ սահմանափակումը յատուկ չէ, իհարկէ, միայն Բալու գաւառին» էջ 6—7: Քրդական ցեղերը միմեանց թշնամի լինելով՝ երբեմն յարձակում են միմեանց վրայ, հալածում իրար և միևնոյն ժամանակ թալանում ու աւերում են հայաբնակ գիւղերը՝ խրախուսուելով տաճիկ կառավարութեան պաշտօնեաներից: Ըստ Շևոտի աւելի կատաղի հայակեր են լինում քրդացած հայերը: Արամին» իբրև նոր գաղափարների տէր երիտասարդ փորձում է շեղուել ականդական երկչոտ քաղաքականութիւնից և իւր անձնական քաջութեամբ քրդերի համակրութեան է արժանանում, բայց հետևանքն այն է լինում, որ ամբողջ գիւղը քարուքանդ է լինում և գիւղացին «կանխօժէր Արամին»...: ԲՐԻՉ

Մատենագրական նորութիւններ

1. Իտալիայի Ֆլորէնցիա քաղաքում երկրորդ սպագրութեամբ լոյս տեսաւ Անատօլիօ Լատինօի մի հոյակապ և պատկերազարդ աշխատութիւն «Gli Armeni e zeitun» վերնագրով, որի մէջ մանրամասնաբար առաջ են բերուած Ձէյթունի տեղեկագիրը և ժողովրդագրական ու պատմական ընդարձակ տեղեկութիւններ: Հեղինակը մի զանի տարիներ ապրել է Կիլիկիայում, ականատես է եղել տեղական անցքերին և բոլոր նիւթերը անձամբ ժողովել:

2. Դր. Բագրատ Խալաթեանցը, որ առաջ Բերլինում, իսկ այժմ Հայդլբերգ քաղաքում Հայ լեզուի դասաւանդութեան պաշտօնն ունի, նորերս հրատարակել է Neue heidelberg. Jahresbücher XIV հրատարակութեան մէջ իւր մի աշխատութիւնը Die armenische Literatur des 19 Jahrhunderts, որ արտատպել է և առանձին գրքոյկով, այս աշխատութեան մէջ հեղինակը մի ակնարկ է ձգել XIX դարու հայ գրականութեան վերայ առհասարակ:

3. Հունդարիայի Սամօշվար քաղաքում լոյս է տեսել Հունգարերէն մի բրօշիւր «AZ Örmény kereszt— Հայերէն խաչ— վերնագրով Ierza Gyula-ի աշխատութեամբ: Հեղինակը ունի նոյն լեզուով և մի քանի ուրիշ աշխատութիւններ հրատարա-

Ված հայոց մասին՝ Յիշեալ գրքոյկը պարունակում է իւր մէջ ընդհանրապէս խաչի ծագման և մասնաւորապէս հայկական խաչի պատմութիւնը, նկարներով հանդերձ։ Մենք կաշխատենք տալ այդ հետաքրքրական գրքոյկի հայ թարգմանութիւնը։

ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- Մարդու կազմուածքը, հրատ. Գ. Մելիք-Կարազեղեանի. պատկերներով. Թիֆլիս 1905 զ. 60 կ.
- Կոնդակ Վեհ. Կաթողիկոսի կալուածների և դպրոցների ստացման մասին. Թիֆլիս 1905.
- Հեղինէ Մելիք ՀԱՅԿԱԶԵԱՆ. Մի պտոյտ շապոնում. Թիֆլիս 1905. զ. 40 կ.
- ԳԱՐ. ՂԵՒՈՆԵԱՆ. Գծագրութիւն և նկարչութիւն. ա. մ. Թիֆլիս 1905. զ. 20 կ.
- ԱՏՐՊԵՏ. Երկերի ժողովածու հ. Գ. Ալմաստ բ. մ. բ. տպ. Թաւրիզ 1905 զ. 1 ո.
- Nerses Ter Mikaelian. Das Armenische Hymnarium. Leipzig 1905
- Գ. ՂԱԶԱՐԵԱՆ. Անասնապահութիւն և կաթնասնտեսութիւն, Վաղարշապատ 1905 զ. 40 կ.
- Կանոնադրութիւն զէմատային նահանգ. և զաւառ. հաստատութիւնների, Թիֆլիս 1905.
- Մ. ՏէՐ ՍԱՐԳՍԵԱՆ. Իմ արկածները, Երևան 1905 զ. 20 կ.
- ՓԱՌՆԱԿէՄ. Պօլերա վոդ. 1 ար. Երևան 1905 զ. 40 կ.
Չուտողի մահը ուտողին հալալ ա կամ ճարպիկ փաստաբան. վոդ. 1 ար. Երևան 1905 զ. 40 կ.
- Մ. ՇԻՈՏ. Քիւրդ պէկ. 3 հատոր Մ. Պ. Բուրգ և Բարիզ 1905 — 4. զ. 75 կ.
- Ն. ԳՈԳՈՂ. Վերաքննիչ. կատ. 5 ար. Թարգմ. Լ. Տ. Վաղարշապատ 1905 զ. 50 կ.
- ԱՄՊՐէ. Տաղեր. Վաղարշապատ 1905 զ. 10 կ.
- Է. ՌԸՆԱՆ. Ի՞նչ է ազգութիւնը. Թարգմ. Յար. Ղարազդեանի. Թիֆլիս 1905 զ. 20 կ.
- Բարիզի Հայ որբերու ինդիքը. Փարիզ 1905.
- ՄԱՐԳԱՐ. Հալածանքի ծնունդը. բարբի երգերից. Ա. Ալէքսանդրապօլ 1905 զ. 20 կ.
- Ա. ՕՍԻՊՕՎ. Մի ամիս Կ. Պօլսում. Թարգմ. Ե. ք. Նալբանդեանցի Ալէքս. 1905 զ. 20 կ.

Совѣщаніе учителей начальныхъ училищъ. Тифлисъ 1905